Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3670

891.71
L-15

891.71-13 3
Լ-15

ԵՐԲՈՐԴ ՈՍԿԻ

ԱՌԱԿ Ա. ԼԱԿԻԴԻՆ

(պարգևատրուած Ս. Պետերբուրգի Ֆրէօբէլեան ընկերութիւնից)

V

Թարգմանութիւն

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԱՒԱԳԻ ԱՂԱՆԵԱՆՑ (ԱՌԱՔԵԼԵԱՆՑ)

ՏՓԽԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՄԷԼԻՔ—ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

1879

2003 4011

31508-4.2

Дозволено Цензурою. Тифлисъ 5 Марта 1879 г.

14549-58գ

ջը երեք ոսկի կար, նո՞ր նո՞ր, ու ինչ-պես էլ փայլո՞ւմ էին։ Դերձակը քրտ-նալուայ եղաւ... մի հատ ոսկի վերցրեց ու դրեց կօշկի մէջ..։ Յետոյ հնացած բոլոր բանները կարգի դրեց, դարձեալ կա-պեց և դրեց այնտեղ, ուր ձգել էր անց-աւորը...

Նա շատ սիրով կվերցնէր երեք ոս-կին էլ, բայց վախեցաւ անցաւորից։ Մէկ ոսկու համար սա անշուշտ այնքան շատ չէր խօսի, որքան երեքի համար։ Ի հար-կէ շատ լաւ կլինէր, եթէ նա ամենևին չտեսնէր էլ կապոցը, այն ժամանակ բո-լոր երեքն էլ կարելի էր վերցնել. բայց ի՞նչպէս իմանար այս..։

Անցաւորը վերադարձաւ գիւղացու մօտից և վերցրեց իւր կապոցը. նա իս-կոյն բաց արեց (դերձակը դարձեալ քրտ-նալուայ եղաւ), վերցրեց քսակը, բացեց և...

—Ո՞ւր է երրորդ ոսկին... հարցրեց դերձակին...

Սա պատասխանեց թէ ամենևին չգիտէ.

—Այդ ի՞նչ երրորդ ոսկի է, որ ասում ես։

Անցաւորը քսակը ցոյց տուեց ու ասաց.

—Երբ ես այստեղ եկայ, սորա մէջ երեք ոսկի կար. մի բոպէ հեռացայ, գընացի գիւղացու մօտ և այժմ երկուսն է մնացել... Դո՞ւ ես արդեօք երրորդը վերցրել..։

—Չ՚Հ, դու էլ, ես ոչինչ չգիտեմ։

—Ի՞նչպէս թէ ոչինչ չգիտես։ Ուրեմն այստեղ բացի քեզանից ուրիշ մարդ էլ է եղե՞լ։

—Ո՛չ ոք չի եղել։

—Ուրեմն դու ես վերցրել։

—Աստուած վկայ, չեմ վերցրել։ Այս ուրիշի կապոցը կ՚քրքրէի՞։ Աստծուն էլ յայտնի է, որ ես չեմ էլ մտածել, թէ դու այստեղ կարող էիր փող ունենալ...

—Այդ ուղիղ է, որ Աստուած ա-

մեն բան տեսնում է, ծանր կերպով ասաց անծանօթը (այսպէս անուանենք անցաւորին) և յետոյ շարունակեց.—Դե՛հ, եթէ որ դու չես վերցրել, էլ խօսելն աւելորդ է. թողնենք այդ բոլորը։ Աւելի լաւ է ինձ ասես թէ ո՛ւր ես գնում։

Դերձակի սիրտը մի փոքր հանդարտեց. նա ուրախացաւ, որ այդպէս հեշտ ազատուեց ոսկիների տիրոջից, այնուհետև սկսաւ անդադար խօսել ու խօսել և պատմել անծանօթին իւր գլխի բոլոր անցածը...։ Անծանօթը ուշադրութեամբ լսում էր նորան և սպասելով մինչև պատմութեան վերջը, ասաց.

—Տե՛ս, քեզ ինչ եմ ասում։ արի միասին գնանք քաղաք, ես էլ գործ ունիմ այնտեղ։ Ես այնտեղ շատ ծանօթներ էլ ունիմ. քեզ կծանօթացնեմ նոցա հետ և կարճ միջոցում շատ գործ կգտնես ու այնտեղ լաւ կապրես քեզ համար...։

Դերձակը շատ շնորհակալ եղաւ,

(նա արդէն անծանօթին համարեց մի նշանաւոր մարդ շորերը փոխած) և նոքա անյապաղ ճանապարհ ընկան...

Ռ.

Տասը վերստի չափ գնալով նոքա հասան մի իշխանի հարուստ կալուածքին, ուր և գտնւում էր նորա տունը։ Արդէն մօտեցան իշխանի տանը ու սկսան նայել նորան. իշխանի սպասաւորը, որ մի երևելի մարդ էր, նոցա ճանապարհը կտրեց...

—Ի՞նչ ես ուզում հարցրեց անծանօթը...:

—Իշխանը հրամայել է ինձ՝ այս կողմ անցնողներից տեղեկանալ, թէ չկա՞ արդեօք նոցա մէջ մի հմուտ բժիշկ, որ կարողանար բժշկել մեր իշխանուհուն. տասը տարի է, ինչ որ նա հիւանդ է և մինչև այսօր հրաւիրած բժիշկներից ոչ ոք չը կարողացաւ օգնել նորան...

—Գայտնեցէ՛ք իշխանին, ասաց անծանօթը, ես բժշկապետ եմ. եթէ Աստուած կամենայ՝ կ՚օգնեմ նորան...

''Է՜ա՜, ուրեմն դու մի երևելի մարդ չե՛ս եղել,,, մտածեց իսկոյն դերձակը, երբ լսեց այդ խօսքերը. ''բժշկապետ, այսինքն մի հասարակ բժիշկ. ա՛յ դուք սատանաներ, հարստների մօտ լաւ կոտրտւում էք, իսկ աղքատներին չէք էլ նայում երեսին,,...: Այս պատճառով նա վատ աչքով սկսաւ նայել անծանօթին. երկու թէ երեք բժիշկներ, որոց հետ նա գործ էր ունեցել իւր կեանքում, նորա վերայ վատ տպաւորութիւն էին արել և այժմ իւր անքաղաքավարութիւնից ու չարութիւնից բոլոր բժշկներին անազնիւ համարեց...

Անծանօթին ու դերձակին ներս տարան լայն բաղը։ Իշխանը դուրս եկաւ պատշգամբը և նոցա տուած ողջունի փոխարէն՝ հազիւ մի փոքր գլուխը շարժեց. նա վեհանձն էր երևում ու խիստ

և կարծես չէր սիրում շատ խօսել։

—Ձեզանից ո՞րն է բժշկապետը։

Ընծանօթը առաջ եկաւ...

—Յա՞նձն ես առնում առողջացնել։

—Եթէ Աստուած կամենայ, կօգնեմ։

—Լա՛ւ. բայց եթէ չես բժշկի, տեսնո՞ւմ ես այն մեքենան։ Հոգեհանիդ այնտեղ կ'տեսնես։

Ընծանօթն ու դերձակը յետ նայեցին, որ կողմն որ ձեռքով ցոյց տուեց իշխանը. բակի ծայրին մի ահագին կախաղան կար շինած...։ Դերձակի մարմինը կարծես ասեղներով ծակծկեցին։ Ընծանօթը ամենևին չշփոթուեց. նա հանդիսատ էր և ոչինչ չպատասխանեց...։ Նոցա ներս տարան ննջարանը հիւանդ իշխանուհու մօտ (դերձակին բժշկի օգնական կարծելով ներս թողին. նա մինչև անգամ հեռաքրքրում էր տեսնել, թէ ինչպէս պէտք է անծանօթը բժշկէր այդպիսի երկարատև հիւանդութիւնը)...։ Ընծանօթը իսկոյն գործի կացաւ. պահանջեց

մի կոնք ու լաւ ջուր. երբ այս ամենը բերին, հիւանդին ոտից գլուխ մերկացրեց, նստացրեց կոնքի մէջ ու սկսեց ջուր ածել ու լուանալ նորան...։ Հիւանդը հառաչում էր և ամենևին չէր կարողանում տեղից շարժուիլ. յետոյ կարծես անհնչացաւ. աչքերը փակեց ու ամենևին չէր կարողանում այլ ևս ձայն ծպտուն հանել...։ Երբ որ անծանօթը լողացրեց հիւանդին, շորերը հագցրեց և նորից դնելով մահճակալի վերայ սկսաւ փչել նորան. մի անգամ փչեց՝ հիւանդը աչքերը բացեց. դարձեալ փըչեց՝ հիւանդը վերկացաւ ու նստաւ մահճի մէջ. երրորդ անգամ էլ որ փչեց՝ հիւանդը սկսաւ մանգալ սենեկում միանգամայն առողջ և ուրախ...

Իշխանը չափազանց ուրախացաւ. նա վարձատրեց անծանօթին երեք պարկ ոսկով, նմանապէս ընծայեց մի ձի ու մի սայլ և միշտ կրկնում էր. ''շնորհակալ եմ ձեզանից, բարի մարդիկ, շնորհակալ

եմ,,։ Անծանօթը շատ համեստ կերպով ընդունեց նորա շնորհակալութիւնը, իսկ դերձակը երբ լսեց իշխանի շնորհակալութիւնը, իւրեան էլ ,,բարի մարդոց,, թւում դասեց և սկսեց մտածել, թէ ինքն էլ բոլորովին անօգուտ չէր այս գործի մէջ..։ Բայց ամենից շատ գրաւում էր նորան երեք պարկ ոսկին. մի՞թէ անծանօթը մի բուռն անգամ չէր տալ նորան։

Գ.

Նոքա հեռացան իշխանի կալուածքից ու առաջ գնացին։ Այժմ լաւ հանգիստ էին. ոտով ու ձիով մանգալու մէջ մեծ զանազանութիւն կայ. յետոյ ձին էլ ի՞նչ կուշտ էր ու առոյգ. երկու մարդուն ու այնքան ծանրոցը այնպէս էր տանում, ինչպէս մի փութ բան։ Մէկ այնպէս էլ վազում էր, որ թրռչունը ետևից չէր հասնի։ Դերձակի նախանձն ու չարութիւնը գրգռուել էր.

,,Արդիկ բաղտ ունին. մտածում էր նա, ,,իսկ ես ամենևին։ Ինչո՞ւ համար այս-,,քան ոսկի տուին սորան. հենց միայն ,,նորա համար, որ ջրով լուաց ու փը-,,չեց։ Այդ հօ ես է՛լ գիտէի. մի մեծ ,,բան չէ ջրով թրջելը... Ես ,,էլ կարծում էի, թէ մի նոր բան է անե-,,լու, իսկ արի տես, թէ ինչ դատարկ ,,բաներով ոտի կանգնացրեց հիւանդին։ ,,Այդ հօ ես էլ կարող եմ անել. լա՛ւ, ,,թող մի դէպք էլ պատահի, ես գի-,,տեմ,,։

Դարձեալ տաս վերստաչափ տեղ անցան նոքա, նայեցին— տեսան մի ուրիշ իշխանական կալուած, մէջն էլ իշխանի տունը. մտան բակը. արդէն իշխանի հոյակապ տան մօտիցն էին անցնում, երբ յանկարծ, չիմացան որ կողմից, մօտեցաւ նոցա մի սպասաւոր և ձիու սանձը բռնելով ասաց.

—Սպասեցէ՛ք. իշխանը պատուիրել է ինձ այստեղից անցնող բոլոր մարդ-

կանցից տեղեկանալ, թէ չկա՞յ արդեօք նոցա մէջ մի հմուտ բժիշկ, որ կարողանայ բժշկել մեր իշխանուհուն. ահա՛ քսան տարի է, որ նա հիւանդ է և մինչև այսօր ոչքան բժիշկ էլ հրաւիրել ենք՝ ոչոք չի կարողացել բժշկել:

Անծանօթը ուզում էր խօսել, բայց դերձակը անքաղաքավարութեամբ ձեռքով փակեց նորա բերանը ու ինքը պատասխանեց ծառային.

—Ասա՛ իշխանին, որ ես բժիշկ եմ. եթէ կամենամ՝ կարող եմ բժշկել:

Սպասաւորը գնաց իշխանին յայտնելու, իսկ դերձակը փոքր ինչ հեռանալով անծանօթից՝ սկսաւ մտածել. «միմիայն դու չպէտք է բժշկես, թող մի փոքր ուրիշն էլ շահուի...: Քանի տարուայ հիւանդ է և ոչ թէ տասը տարուայ առաջուայ հիւանդի պէս: Դորա համար էլ շնորհակալութիւնը շատ աւելի մեծ կլինի առողջացնելուս համար. գուցէ ոսկի էլ շատ ունենամ քեզանից...

Նոցա ներս տարան իշխանական տան լայնարձակ բակը, ուր այս անգամ ինքեանք նկատեցին կախաղանը (դերձակը իսկոյն դէմքը շուռ տուեց ու շտապեց փախչել այդ զարհուրելի գործիքը տեսնելուց)... Իշխանը դուրս եկաւ պատշգամբը, նա նոյնչափ ծանրատեսիլ էր ու խիստ, ոչքան և առաջինը:

—Ձեզանից ո՞րն է բժիշկը, հարցրեց նա:

Դերձակը ծանր կերպով առաջ եկաւ...

—Յա՞նձն ես առնում առողջացնել:

—Այո՛, Յանձն եմ առնում. հենց դորա համար եմ բժիշկ: Եթէ կամենամ կարող եմ անշուշտ բժշկել. այս առաջին անգամը չէ, որ այդպիսի գործ ենք կատարում:

Դերձակը իւր պատիւն աւելացնելու համար՝ սուտ էլ խօսեց. բայց իշխանը որոշ պայման դրեց նորա հետ.

—Լա՛ւ, ասաց նա. իսկ եթէ չես

14549-58
1008/36131

առողջացնի, այն ժամանակ, տեսնում ես այն մեքենան, նա կտայ քեզ պատասխան։

Դերձակը վախեցաւ ու դեղնեց. բայց իսկոյն ուղղուեց ու իշխանի հետ գնաց Հիւանդի մօտ... Ընծանօթը այս անգամ հետաքրքրութիւնից շարժուած հետևեց նորան...

Ընծանօթի արածի պէս, դերձակը պահանջեց կոնք ու մաքուր ջուր. այս բոլորը բերին ու նա մերկացնելով Հիւանդին նստացրեց կոնքի մէջ, սկսաւ ջուր ածել նորա վերայ և լուանալ. Հիւանդը հառաչում էր, իսկ յետոյ անշնչացաւ...։ Լողացնելը վերջացնելով դերձակը շորերը հագցրեց նորան ու պառկացրեց մահճակալի վերայ. յետոյ սկսեց փչել. մի անգամ փչեց, երկրորդ անգամ էլ փչեց, երրորդ անգամ էլ, տաս, քսան անգամ էլ— բայց ոչինչ օգնութիւն չեղաւ Հիւանդին։ Հիւանդը մեռածի պէս պառկած էր. ոչ աչքերն

էր բաց անում և ոչ մարմնի որ և իցէ մասը շարժում...

Մի քանի անգամ անցուդարձ արեց մեր դերձակը սենեկի մէջ չտեսնելով ոչինչ բան ու դարձեալ սկսաւ փչել Հիւանդին. փչեց, փչեց, մի ամբողջ ժամ փչեց. կէս օր փչեց, շատ փքուելուց կապտեց, բայց ոչինչ հետևանք չունեցաւ. Հիւանդը անշունչ պառկած էր։

Յուսահատութիւնից նա դիմեց անծանօթին.

—Ի՞նչ անեմ։ Լշ ի՞նչպէս փչեմ։ Սովորցրո՛ւ, 'ի սէր Աստծու, թէ չէ կորած եմ։

—Լաւ կ'սովորցնեմ։ Բայց նախ և առաջ ինձ ասա, թէ ի՞նչ եղաւ երրորդ ոսկին...

—Աշխ, դու դեռ հին բաներից ձեռք չես վերցնում։ Լա՛ւ, ես ի՞նչ գիտեմ ինչ եղաւ։ Ես չեմ վերցրել։ Օգնիր, Աստուածդ սիրես, բարութիւն արա ինձ։ Շո՛ւտ, թէ չէ կ'կախեն ինձ։

—Դեռ առաջ ասա, թէ երրորդ ոսկին ո՞ւր է։

Իշխանն արդէն տեսաւ, որ այդ բըժիշկը բանի շնորհք չունի, հրամայեց որ կախեն. կապեցին խեղճ բժշկին ու քարշեցին կախաղանի մօտ... Դերձակը ընդդիմանում էր, լաց էր լինում և անդադար խնդրում էր անծանօթից, որ սովորցնի. ''Ինդրեմ փչեր, ի՞նչ կպակսի քեզ։ Մոնէ մի փոքր փչեր, թէ չէ բոլորովին կորած եմ ես... Իսկ անծանօթը անդադար պնդում էր թէ ''ասա՛, ո՛վ վերցրեց երրորդ ոսկին,,։

Սակայն դերձակը չխոստովանեց իւր գողութիւնը. նա արդէն նոյն իսկ կախաղանի տակ էր, բայց դարձեալ նոյն պատասխանն էր տալիս. ''Ազիտեմ, ես չեմ վերցրել, Աստուած վկայ է, որ ես չեմ վերցրել,,։

Անծանօթը խղճաց կամակոր դերձակին ու ասաց Իշխանին.

—Ազատ թողէք դորան. դա մի

թշուառ մարդ է, որովհետև այնպիսի բան է յանձն առնում, ինչ որ իւր գործը չէ։ Ես կլուացնեմ Իշխանուհուն. նա կառողջանայ էլ ու կուրախանայ էլ։

Դերձակին ազատեցին, իսկ անծանօթը գնաց Հիւանդի մօտ. մի անգամ փչեց՝ Հիւանդը աչքերը բացեց. դարձեալ փչեց՝ վեր կացաւ ու նստեց մահճակալի վերայ. երրորդ անգամ էլ որ փչեց՝ Հիւանդը սկսաւ մանգալ սենեկում, բոլորովին առողջ և ուրախ...

Իշխանը այն աստիճան ուրախացաւ, որ դեռ իւր կեանքում չէր ուրախացել այնպէս. 'Ի պատիւ անծանօթի նա խնջոյք տուեց և ընծայեց նորան վեց պարկ ոսկի։ Երկան բազմաթիւ հիւրեր և սկսան ուրախութիւն անել, գինին առուակի պէս թափւում էր... Դերձակը փոքր ինչ խմեց ու ասաց.

—Դա միմիայն փչել գիտէ, իսկ իմ գործս աւելի շատ էր. ես մերկացրի Իշխանուհուն, դրի կոնքի մէջ, թրջեցի ու

լողացրի ջրով. յետոյ նորից հագցրի ու դրի մահճակալի վերայ... Դեռ հիմի էլ ձեռներս ցաւում են այն մեծ աշխատանքից, իսկ նա ոչինչ չշինեց, նորա միակ շնորհքը փչելն է։

—Թո՛ղ այդպէս լինի, պատասխանեց անծանօթը. ճշմարիտը պէտք է ասել, որ քո չարչարանքը աւելի էր քան իմը։

Խնջոյքից փոքր ինչ յետոյ՝ նոքա բաժանուեցան իշխանից ու ինը պարկ ոսկով շարունակեցին իւրեանց ճանապարհը... Նախանձն ու չարութիւնը աւելի ու աւելի նեղացնում էին դերձակին։

Դ.

Ձորս վերստ ճանապարհ գնալուց յետոյ՝ տեսան մի գետ, որ պիտի անցնէին ճանապարհը շարունակելու համար, բայց ո՛չ նաւակ կար, և ո՛չ ուրիշ մի բան, որով կարողանային միւս ափն անցնել.

գետն էլ սընթաց էր ու բաւական էլ լայն...

—Այժմ մենք ի՞նչ պէտք է անենք, հարցրեց դերձակը։

—Ա՛յ կտեսնենք, պատասխանեց անծանօթը. այն մեծ քարը, որ ա՜յ հեռու տեղ ընկած է, հօ տե՛սնում ես, անշուշտ այնտեղ երբ և իցէ ջրաղաց է եղել... Գնանք այնտեղ։

Գնացին նոքա այն մեծ ու կլոր քարի մօտ. անծանօթը գլորեց այն քարը ջրի մէջ և սայլակը ծանրոցն ու ձիուն տեղաւորեց նորա վերայ. քարը կենդանի էակի պէս այն բոլորը հասցրեց միւս ափը և յետ դարձաւ իւր առաջուայ տեղը...

—Այժմ հերթը մերն է, ասաց դերձակը։

—Ո՛չ, սպասի՛ր. միասին չենք կարող անցնել, պատասխանեց անծանօթը.— ես շատ ծանր եմ և գիտեմ, որ քարը հազիւ միայն ինձ կարող է տե-

զափոխել և եթէ որ դու էլ ինձ հետ միասին կանգնես Նորա վերայ, անշուշտ տակը կանի մեզ։ Աւելի լաւ է, որ մէկ մէկ տեղափոխուենք, առաջ ես ու յետոյ դու։

—Չ՛հ, չէ՛, ես համաձայն չեմ։ առաջ թող ես անցնեմ։

—Դեհ, լա՛ւ, առաջ դու գնա։

Դերձակը պատճառ ունէր, որ վիճում էր առաջ տեղափոխուելու մասին. նա վախենում էր, թէ անծանօթը առաջ տեղափոխուելով միւս ափը, դուցէ ոսկիները վերցնի ու գնայ, իւրեան—դերձակին՝ բաղտի կամքին յանձնելով... ‘‘Յետոյ իմ բոլոր աշխատանքս ’ի զուր կանցնեն,, , ինքն իւրեան ասաց դերձակն ու շուտով թռաւ քարի վերայ...

Քարը առաջ գնաց, որ դերձակին դուրս տանի միւս ափը. նա յաջողութեամբ հասաւ գետի մէջ տեղը, բայց յանկարծ չգիտեմ ինչ պատճառով սկսաւ իջնել ջրի խորքը... Դերձակը յուսահատութիւնից ձեռները շարժում էր ու աղաղակում։

—Ընկղմում եմ, ընկղմում, օգնեցէ՛ք, փրկեցէ՛ք։

—Կփրկեմ, ասաց անծանօթը. միայն ինձ ասա, թէ ո՞վ վերցրեց երրորդ ոսկին...

—Չգիտեմ, Աստուած վկայ չգիտեմ։ Օգնի՛ր, հոգիս, ընկղմում եմ. վա՛յ, վա՛յ։

Քարը բոլորովին ծածկուեց ջրի տակ և դերձակն էլ նորա հետ միասին ընկղմուեց մինչև կէսը...

—Ասա՛, ո՞վ վերցրեց երրորդ ոսկին.

—Չգիտեմ, ես չեմ վերցրել, Աստուած վկայ չեմ վերցրել։ Օգնիր, ’ի սէր Ստեղծողին, բոլորովին ընկղմում եմ։ Վա՛յ, օգնի՛ր։

Նա աւելի ու աւելի ընկղմում էր ջրի մէջ և միմիայն գլուխն էր երևում գզգզած մազերով ու զարհուրած դէմքով... ‘‘Դա սորան ի՞նչ անեմ,, մտածեց անծանօթը և վազեց նորա մօտ

ջրի վերայից այնպէս, ինչպէս ցամաքի վերայ կարելի է վազել. բռնեց նորան ու ջրից հանելով՝ դուրս տարաւ միւս ափը բոլորովին առողջ ու անվնաս... Միմիայն ջուրը վտակի պէս հոսում էր դերձակի վերայից. բայց նա սագի պէս ցնցուեց ու վերջացաւ ամեն բան։

Երբ նոքա առաջուան պէս նստան սայլի մէջ և փոքր ինչ առաջ գնացին, անծանօթն ասաց.

—Դիտե՞ս ինչ կայ, բարեկամ։ Ես կարծում եմ, որ այժմ կարիք չունիմ քեզ հետ միասին քաղաք գնալու ու քեզ ծանօթացնելու բարեկամներիս ու ծանօթներիս հետ գործ տալու համար. դու իսկոյն կտանաս քո մասը ոսկին և այնչափ հարուստ կ'լինես, որ կարծեմ դերձակութիւնից էլ ձեռք կ'վերցնես... Երի բաժանենք ու մենք էլ հեռանանք միմեանցից։

—Երի՛, հա ի՞նչ է, ես պատրաստ եմ։

Դերձակը չափազանց ուրախացաւ,

որովհետև մինչև այդ բոպէն չէր հաւատում, թէ անծանօթը իւրեան էլ մասը պիտի տար հաւաքած ոսկուց... Նորա աչքերը վառուեցան, ձեռքերի դողն էլ բռնեց. նա մինչև անգամ պատրաստ էր նորից խոնարհել անծանօթի առաջ և այս անգամ գետնի հետ հաւասար...

Նոքա սայլը կանգնեցրին ու վայր իջան գետին. անծանօթը ոսկով լեցը պարկերը շուռ տուեց գետնին և նոցա միջի բոլոր ոսկին հաւաքեց և դիզեց միասին. մի ոսկեայ բլրակ դառաւ, որ այնպէս էր փայլում շուրջը մի քանի վերստ հեռաւորութեամբ, ինչպէս երկնքից ցած ընկած արեգակ։ Դերձակը չէր կարողանում աչքերը հեռացնել նորանից, կարծես վրէն մեխած ունենար. նա անդադար դողում էր ու շրթունքները լեզում... Անծանօթը սկսեց երեք փոքր կոյտերի բաժանել ոսկին...

—Ինչո՞ւ այդպէս, զարմացած հարցրեց դերձակը. չէ՞ որ մենք երկու հո-

գի ենք. այդ երրորդ կոյտը ում համար ես պատրաստում...

—Սպասի՛ր, իսկոյն կիմանաս...

Անծանօթը բաժանում էր ոսկին. իսկ դերձակը գլուխն էր ջարդում. ախր ո՞ւմ պիտի հանի այս երրորդ կոյտը. ի՞նքը պիտի վերցնի... Սակայն նա ձեռները անգործ չէր թողնում. հենց որ անծանօթը կմօտենար որ և է կոյտին, նա իսկոյն կամաց մի բուռն ոսկի կվերցներ ուրիշ կոյտից ու կնածէր գրպանը կամ ծոցը... Այդպիսով նա բոլոր բաժիններից քիչ ոսկի չդողացաւ...

Անծանօթը բաժանեց վերջացաւ ու ասաց.

—Դե՛հ, այժմ նայի՛ր, ա՛յ այս կոյտը ինձ, այս միւսը քեզ, իսկ այս երրորդը նորան, ով որ իմ երրորդ ոսկին վերցրեց...

Դերձակը ամենևին այսպիսի խօսքի յոյս չունէր, բայց ճար չկար. վերջապէս պէտք է խոստովանէր, այլապէս

չէր կարող երրորդ կոյտ ոսկին ստանալ: Նա ծոծրակը քորելով ակռայ ասաց (բաւական ծանր էր այդ բոպէն նորա համար).

—Ը՛ս վերցրի երրորդ ոսկին...

Անծանօթը զարմացած նայեց նորան.

—Դո՞ւ, այդ կարելի բան չէ:

—Ստուա՛ծ վկայ ես վերցրի:

—Այդ ե՞րբ էր... չե՞մ հաւատում...

—Նոյն իսկ բոպէին, երբ դու գնացիր գիւղացուց ճանապարհը հարցնելու...

—Հապա մի ցոյց տուր այն ոսկին, ես իսկոյն կճանաչեմ:

Դերձակը շտապով ձեռքը տարաւ դէպի կօշիկը. բայց այդ բոպէին յանկարծ գրպանի բերանը բացուեց ու կոյտերից դողացած ոսկիները թափուեցան զանազան կողմերը...

—Վա՛հ, վա՛հ, այդ ի՞նչ շատ ոսկիք ես ունեցել, աղաղակեց անծանօթը. ո՞րտեղից ես դու այսքան ոսկի ձեռք բերել:

Դերձակի լեզուն շփոթութիւնից՝ կապուեցաւ, իսկ անծանօթը պատասխանեց.

—Ոսկին ում որ սիրում է, նորա մօտ է գնում: Ա՛յ ես քեզ հետ միասին նստած էի ոսկու մօտ, իսկ, տես, ինձ մօտ մի հատիկ ոսկի եկա՞ւ: Ասա-մենևին չեմ ուզում նորան. ա՛ռ, քեզ լինին բոլոր բաժինները:

Ասաց ու անյայտացաւ անծանօթը. դերձակը ընկատեց անգամ, թէ ինչ եղաւ նա... Բայց սակայն դերձակի հոգն էլ չէր, թէ ինչ եղաւ անծանօթը. նա վրայ ընկաւ ոսկու կոյտերին, նայեց— այլ ևս ոսկի չէր նորա առաջ, այլ երեք կոյտ ամեն տեսակ աղբ ու ապականութիւն... Այս յուսահատութիւնից աղաղակեց, վայր ընկաւ գետնին, սկսաւ փոքրիկ մանկան պէս հեկեկալ ու զարթնեց:

Ե.

Ուրեմն այդ երա՞զ էր...

Ա՛յո՛, երազ էր. բայց այնպիսի պարզ, որոշ երազ, որ դերձակը երկար ժամանակ անզգայացած նայում էր շուրջը, որոնելով իւր ոսկէ կոյտերը, որոնք աղբ էին դարձել և անյայտ անծանօթին... Ոսկին կարծես դեռ էլի փայլում էր նորա աչքերի մէջ, անծանօթի խօսքերը դեռ էլի հնչում էին նորա ականջին... Բայց ո՛չ մինը կար և ո՛չ միւսը. չորս կողմը դաշտ էր, դատարկ դաշտ, թոզոտ ճանապարհ ու նորա վերայ էլ այն քարը, որի վերայ դերձակը նստեց հանգստանալու և որի վերայից աննկատելի կերպով ընկաւ խիտ խոտերի մէջ, դալկացած լինելով անսովոր երկայն ճանապարհորդութիւնից ու նիրհելով ընկել էր խոր ու երկարատև երազի մէջ...

Ց. սարկ. Առաքելեանց—Զաքանեանցի թարգմանութիւնները.—

1 —ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՐԳԵԼՔՆԵՐԻՆ ՅԱՂԹՈՒՄ Է.
Գործ Ֆրանց Հոֆմանի. երես 14¹
1877. Տփխիս. գինն է . . . 40 կ.

2 —ԽԱՒԱՐԻՑ ԴԷՊԻ ԼՈՅՍ.
Գործ Նոյն Հոֆմանի. երես 146.
1877. Տփխիս. գինն է . . . 40 կ

3 —ԳՕՆ ՔԻՇՕՏ ԼԱՄԱՆՇԵՅԻ.
Գործ Մ. Սկրվանտէսի. համառօտ տպագրութիւն Վ. Հիւգոյի հրատարակութիւնից թարգմանած. երես 240.
1878. Տփխիս. գինն է . . . 70 կ.

4 —ԳԷՈՐԳ ՌՕԼԼԷՍՏՕՆ.
Երես 168. 1879. Տփխիս գինն 60 կ.

5 —ԵՐՐՈՐԴ ՈՍԿԻ.
Առակ Ա. Լակիդէի. երես 32. 1879.
Տփխիս. գինն է . . . . . 15 կ.

Տպագրութեան համար պատրաստվում է "ԳԻՐՈՐԴ ՍՏԻՖԼԻՆՍՕՆ"։

Тип. А. Меликъ—Шахназарьянца, на Мих. мосту д. Мирзоева

3670

2013